



ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՂԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ կեանքին մէջ աղէտներ կան, որոնք իրենց հարուածին ահաւորութեամբ կը զգեստեն ու յաճախ կ'անդգայացնեն, երբեմն նոյնիսկ խլելով անոնցմէ վերադրելու ամէն միջոց ու կարելիութիւն: Իսկ մարդկային պատմութեան մէջ կան բացառիկ պարագաներ, երբ նման աղէտի հանդիպած ժողովուրդ մը ինքզինքին մէջ կը գտնէ բաւարար ուժ եւ կամք՝ ոտքի նետուիլու եւ ապրելու:

Հայր այդ բացառիկ պարագան կը ներկայացնէ: Տարօրինակ բարենիշ մը ասիկա իրեն՝ ինք որ իր արխնոտ պատմութեան ընթացքին նուազագոյն քանի մը անգամ տենդային այդ ձգտումը ցոյց տուած է եւ ապրած: Եւ սակայն, դէպի կեանք այդ ձգտումը չէ եղած զուտ բնազդական արարք մը, այնպէս՝ ինչպէս բոյսերը իրենց տերեւներն ու ճիւղերը կ'ուզեն դէպի արեւին ճառագայթները: Ծիշդ է որ Հայ կեանքին բաղձիցս վերրնծիւղումը նախ եւ աւելնէն առաջ ապրելու տենջի գրեթէ բնազդական գործնականացումն է. բայց այդ առաջին քայլը միշտ առնուած է՝ որպէսզի ապրելով՝ Հայը կարենայ իմաստ մը տալ տաժանքով ստացուած իր կեանքին, բեղմնաւորել ու արդիւնաւորել դաշն, ի շահ իրեն, չուրջիններուն եւ բոլորին: Յեղային մեծամոլութեան սնամէջ հաստատում մը չէ ասիկա, որովհետեւ Հայուն կեանքը եւ Հայուն դարաւոր մշակոյթը այս կը փաստեն: Հայը «Բանին սպասարկուն» է, Գեղեցիկին հիացողը, արժեւորողն ու գնահատողը այն բոլորին՝ որոնք կը բխին հոգիէն ու մտածողութենէն, որոնք բարի են եւ ուղիւն ուղիւ, որոնք ճշմարիտ են եւ բարոյացնող: Թող խամբի՝ Հայուն քով նկարագրի այս հաստատ գիծը, եւ ան տարբերութիւն պիտի չունենայ ու պիտի չզանազանուի այն շատ մը ցեղերէն՝ որոնց գոյութիւնը այս աշխարհին վրայ բնւ մըն է միայն: Պատահականութեան կամ քմահաճոյքի մը արդիւնք չէր 1915 Ապրիլ 24-ին աւելնէն առաջ Հայ միաթին եւ սիրտին տրուած գրեթէ մահացու հարուածը: Մեզ ոչնչացնել նկրտող չար ոգին շատ լաւ գիտէր ար-

ժէքը Հայ կրօնականին ու գրագէտին, Հայ արուեստագէտին եւ բժիշկին:

Ինչպէս անհատներ՝ նոյնպէս եւ ժողովուրդներ կ'ապրին ու կը ստեղծագործեն նպատակի մը համար: Այլապէս մարդկոյնին կեանքը պիտի նմանէր խոտի գոյութեան՝ աննպատակ եւ անպրգին: Ժողովուրդներու մէջ ստէպ յայտնուող հզօր իմացականութիւններն են որ ուղղութիւն կու տան, կը գծեն այն ճանապարհը որմէ պիտի ընթանան բաղմութիւններ յաջորդող հարիւրամեակներուն: Այս բոլորը սակայն այն հաւաքականութիւններուն մօտ՝ որ խաղաղութիւնը կը տիրէ, որ մարդիկ կը կոխեն իրենց հայրենի հողին վրայ հպարտ ու ինքնավստահ, որ անորոշ ու մութ ապագան երախարաց դէմ յանդիման չի գտնուիր իրենց:

Մենք որ այսօր Հայ սփիւռքը կը կազմենք, ոչ միայն հզօր իմացականութիւններու, այլ մարգարէական յայտնատեսութեամբ օժտուած անձնաւորութիւններու պէտք ունինք, որպէսզի մեզի ցոյց տան, իրբեւ նոր օրերու «կրակէ սիւներ» այն ուղին՝ որուն պարտաւոր ենք հետեւիլ անշեղ ու հաւատաւ, եթէ կ'ուզենք պահել Հայու մեր դիմագիծը եւ օր մը, երջանկաբեր օր մը, մեր ոտքերը կոխել այն հողին վրայ որ տակաւին արիւն կը բուրէ: Որովհետեւ, չի բաւեր միայն խօսիլ ծրագիրներու մասին եւ ըլլալ խօսքի ու բառի վարպետներ: Որովհետեւ, չի բաւեր միայն տարին անգամ մը յուշահանդէսներ կազմակերպել եւ ողբալ կամ սիգանալ, ու տպտամէն բան մոռացութեան տալ: Մեզի կը պակսի Տեսիլքը մեր ապագային, այն գերազանցօրէն հմայիչ լոյսը՝ որ պայծառացնէր մեր ներկան, չունչ տար ու կեանք ու կորով՝ դէպի իրեն յառաջանալու, եւ որ մեզի լսելի դարձնէր ձայնը դարերէն եկող՝ մեր կոչումը պատգամող:

Եւ իրապէս, Հայ ըլլալ՝ կը նշանակէ կոչում ունենալ այս կեանքին մէջ, ապրիլ լոյսը ունենալ տարբեր Յայնէն, Ամերիկացիէն կամ Սաւանայիէն: Այդ կոչումը մեզ կը պարտաւորեցնէ անընդմէջ դժգոյսութիւններու, զրկումներու, դժուարութիւններու եւ այլ նեղութիւններու: Այո՛, դժուար է Հայ ըլլալ ու Հայ ապրիլ. հզօր կամք անհրաժեշտ է, դիմանալու կորով, հաստատամտութիւն եւ մանաւանդ՝ հաւատք մեր ապագային, մեր գալիքին, մեր երջանկութեան: Դժուար է Հայ ըլլալ, սակայն միաժամանակ մեծագոյն պատիւ է այդպէս ծնած ըլլալ: Կեանքը զոր կ'ապրինք՝ մարտահրաշխանութիւն լիցուն է, պայքարներով, հոսանքն ի վեր ընթանալու ճիգերով: Ան սակայն այն կեանքն է՝ որ մեզ մեր նպատակին կ'առաջնորդէ, անոր՝ որուն համար հոսեցաւ բիւրաւոր Հայերու մարբումարութիւնը: Անոնց Երազը իրականացնելու կոչուածներն ենք մենք. հաւատք ունենանք մեր վրայ, ողեղինուինք, պայքարին, արեւին յանուն այդ Երազին, եւ, ինչպէս մեծ գրագէտը կը պատգամէ, եթէ Աստուծոյ կողմէ մեզի հարցութի թէ վերստին ծնունդի մը՝ պարագային ո՛ր աղբիւն կ'ուզենք պատկանիլ, պատասխանենք:

«Տէր, հակառակ բոլոր տառապանքներուն եւ բոլոր նեղութիւններուն, մեզ վերստին Հայ ըրէ»:

Ա. Գ.